ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 1502,

31 օգոստոս 2022թ.

ԱԼԼ ԳՐՈՒՊ ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՍԱՄՎԵԼ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան

Մասիս համայնքապետարանի և <<ԱԼԼ Գրուպ>> ՍՊԸ-ի միջև 04.05.2022թ. կնքվել են N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/1-1, N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/1-2 և ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/1-4 ծածկագրերով աշխատանքների կատարման գնման պայմանագրեր, որոնց շրջանակներում ընկերությունը պարտավորվել է ֆինանսական միջոցների առկայության և դրանց հիման վրա կողմերի միջև համաձայնագրերի կնքման միջոցով իրականացնելու համապատասխանաբար ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 3-րդ թաղամաս թիվ 12 հանրակացարանի 40 մասնաշենքի Հերացի փողոցին հարող դիմային մասի երեսապատման, ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի մ/կ թիվ 17 շենքի բակում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման և ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 3-րդ թաղամաս թիվ 16 շենքի բակի բարեկարգման աշխատանքները: Պայմանագրերի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր: Համապատասխան համաձայնագրերը կնքվել են 27.06.2022թ.-ին և նույն օրը մտել ուժի մեջ: Մինչ օրս Ձեր ընկերության կողմից շինարարական աշխատանքների իրականացման ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել՝ չնայած պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր և բանավոր տեղեկացումներին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով Մասիսի համայնքապետարանի և <<ԱԼԼ Գրուպ>> ՍՊԸ-ի միջև 04.05.2022թ. կնքված N ԱՄՄՀ-

ԳՀԱՇՁԲ-22/1-1, N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/1-2 և ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/1-4 ծածկագրերով աշխատանքների կատարման գնման պայմանագրերի 3-րդ կետի 3.1.4 ենթակետի ա) և բ) պարբերությունները, 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի դրույթները՝ պայմանագրերը կհամարվեն միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատու կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Միաժամանակ առաջարկում ենք Կարատողի կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման՝ ընդհանուրը 3 358 500 /երեք միլիոն երեք հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովումները՝ ընդհանուրը 2 239 000 /երկու միլիոն երկու հարյուր երեսունինը հազար/ ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում վճարել 900 435 002 101 հաշվեհամարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի Պատվիրատուի կողմից:

Նշված ժամկետում պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

Համայնքի ղեկավարի

պարտականությունները կատարող **Նորայր Հակոբյան**

Կատ. Գնումների բաժնի
գլխավոր մասնագետ՝ Ս.
Սիրեկանյան